ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 հուլիսի 2019 թվականի 98- Ա

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՄԱՐԶԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 19.09.2002թ. թիվ 1796-Ն որոշման հավելված 1-ի 1-ին կետով

Որոշում եմ.

1. Մարզի բնակչության զբաղվածությանն ուղղված ծրագրերի արդյունավետության բարձրացման նպատակով ստեղծել Զբաղվածության հարցերը համակարգող մարզային հանձնաժողով հետևյալ կազմով.

Թաթուլ Ստեփանյան	– հանձնաժողովի նախագահ, ՀՀ Տավուշի մարզպետի տեղակալ,
Արբակ Գրիգորյան	- ՀՀ Տավուշի մարզպետի խորհրդական,
Ռուբեն Տիգրանյան	– ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ,
Նարինե Ճաղարյան	– հանձնաժողովի քարտուղար, ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության գլխավոր մասնագետ,
Մեսրոպ Մխիթարյան	– ՀՀ ԱՍՀՆ աշխատակազմի զբաղվածության պետական գործակալության Իջևանի տարածքային կենտրոնի տնօրեն,
Կարեն Հովհաննիսյան	– ՀՀ ԱՍՀՆ աշխատակազմի զբաղվածության պետական գործակալության Դիլիջանի տարածքային կենտրոնի տնօրենի ժ/պ,,
Մարտին Ապրեսյան	– ՀՀ ԱՍՀՆ աշխատակազմի զբաղվածության պետական գործակալության Բերդի տարածքային կենտրոնի տնօրեն,
Սամվել Բուդաղյան	– ՀՀ ԱՍՀՆ աշխատակազմի զբաղվածության պետական գործակալության Իջևանի տարածքային կենտրոնի տնօրեն,

Հասմիկ Ազիբեկյան	- ,, CCD Territorial Cooperation,, ՀԿ-ի նախագահ
Արմինե Ներսիսյան	- ,,Հույսի կամուրջ,, ՀԿ-ի Իջևանի մասնաճյուղի նախագահ,
Լուսինե Աղաբաբյան	- ՀՕՖ-ի Բերդի գրասենյակի ղեկավար
Շուշան Սահակյան	- ,, Երիտասարդական գաղափարներ,, ՀԿ –ի նախագահ

2. Հաստատել հանձնաժողովի աշխատակարգը՝ համաձայն հավելվածի:

Հ.ՉՈԲԱՆՅԱՆ

22.07.2019

2019թ. հուլիսի 18
Ք. Իջևան

Հավելված
ՀՀ Տավուշի մարզպետի
18.07.2019թ. թիվ 98-Ա որոշման

ԱՇԽԱՏԱԿԱՐԳ

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՄԱՐԶԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնադրությունը սահմանում է բնակչության զբաղվածության հարցերը համակարգող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) գործունեության կարգը:

2. Հանձնաժողովը գործում է հասարակական հիմունքներով:

3.Հանձնաժողովն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և սույն կանոնադրությանը համապատասխան:

II. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆՊԱՏԱԿԸ

4. Հանձնաժողովի նպատակն է՝

1) ապահովել Զբաղվածության կարգավորման ամենամյա պետական ծրագրով նախատեսված ծրագրերի իրականացման հասցեականությունը և արդյունավետությունը,

2) իր իրավասության շրջանակներում համակարգել մարզում պետական և ոչ պետական կազմակերպությունների կողմից մարզի համայնքներում իրականացվող, բնակչության զբաղվածության հարցերին ուղղված ծրագրերը,

3)Աջակցել մարզի տարածքում գործող տեղական, միջազգային կազմակերպությունների և բարերարների կողմից իրականացվող, բնակչության զբաղվածությունն ապահովող ծրագրերի իրականացմանը, ապահովել գործազուրկների և աշխատանք փնտրողների նպատակային ուղղորդումը:

III. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

5. Հանձնաժողովի գործառույթներն են՝

1) քննարկել հանձնաժողով ներկայացված ծրագրերը,

2) ուսումնասիրել և քննարկել ամենամյա պետական ծրագրերը, մշակել և լիազոր մարմին ներկայացնել փոփոխություններ կամ առաջարկություններ ներկայացված նախագծերում,

4) ապահովել իրականացվող ծրագրերի հրապարակայնությունը:

IV. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

1. Հանձնաժողովն իր գործունեությունն իրականացնում է նիստերի միջոցով:
2. Հանձնաժողովի նիստերը հրավիրվում են ըստ անհրաժեշտության:
3. Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե նիստին մասնակցում են հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի կեսից ավելին:
4. Հանձնաժողովի նիստերը վարում է հանձնաժողովի նախագահը:

5. Հանձնաժողովի նախագահը՝

1) հրավիրում և վարում է հանձնաժողովի նիստերը,

2) ապահովում է հանձնաժողովի բնականոն գործունեությունը,

3) մասնակցում է որոշումների կայացման գործընթացին,

4) համակարգում է հանձնաժողովի աշխատանքը:

6. Հանձնաժողովի նախագահի բացակայության դեպքում նրան փոխարինում է հանձնաժողովի անդամներից որևէ մեկը՝ հանձնաժողովի որոշմամբ:

7. Հանձնաժողովի անդամը՝

1) մասնակցում է հանձնաժողովի նիստերին,

2) մասնակցում է որոշումների կայացման գործընթացին,

3) ծանոթանում է հանձնաժողովի նիստերի արձանագրություններին,

4) հանձնաժողովի կողմից կայացված որոշմանը դեմ քվեարկելու դեպքում կարող է հատուկ կարծիք ներկայացնել հանձնաժողով և Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն:

8. Հանձնաժողովի քարտուղարը՝

1) ապահովում է հանձնաժողովի նիստերի կազմակերպումը,

2) ապահովում է հանձնաժողովի նիստերի արձանագրությունների կազմումը, շրջանառում է այն և համակարգում հանձնաժողովի անդամների դիտողությունների ու առաջարկությունների քննարկման գործընթացը:

9. Հանձնաժողովի քարտուղարի բացակայության դեպքում նրան փոխարինում է հանձնաժողովի անդամներից որևէ մեկը՝ հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ:

10. Հանձնաժողովը որոշումներն ընդունում է նիստին մասնակցած անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, ընդ որում՝ ձայների հավասար բաշխման դեպքում հանձնաժողովի նախագահի ձայնը վճռորոշ է:

11. Հանձնաժողովի հրավերով նիստերին կարող են մասնակցել պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական կամ այլ կազմակերպությունների և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներ:

21. Հանձնաժողովի գործունեությունը կարող է դադարեցվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ ՀՀ Տավուշի մարզպետի կարգադրությամբ:

/ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ա.ԳԵՎՈՐԳՅԱՆ